հատ, 75 միլիոն հատ ավելացված պլանի
հանդեպ՝ կամ պլանի 111 տոկոսը:
Պտակները — մթերված է 106,2 տո-
կոս:

Զալբուկ — մինչեւ հունվարի տասը—
98,8 տոկոս: (Ընկ. Բագիրով. — արդեն
կատարել ենք):

Ընկ. Բերիա. — Ահա Բագիրովը ա-
սում է — կատարել ենք: Նշանակում է
շատ լավ է:

Կաքնամբերբեներ — 109,0 տոկոսով:
Կաշու հումույր — իուզոր կաշվի հու-
մույթի մթերումները ԱՍՖԽՀ-ում կատար-
ված է 108,7 տոկոսով, իսկ մանը կաշվի
հումույթը — 110,2 տոկոսով:

Տեխնիկական խաղողի մթերումը —
103,1 տոկոսով:

Այսպիսով 1933 թվին Անդրկովկասում
համարյա բոլոր գյուղատնտեսական մթերք
ների մթերումների պլանը կատրված և
գերակատարված է: Այդ հաջողություննե-
րին, անպարհան նպաստել ե այն հանդա-
մանքը, վոր պետությունը պայմանագրու-
վողների հանդեպ ունեցած պարտավորու-
թյունները կատրել ե նույնպես ճշտապա-
հությամբ և ժամկետին:

ՍՍԽԳՀ ԳՅՈՒՂԱ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԸ

Ցես արդեն ասել եմ, թե 1932-33 թ.
ք. ընթացքում գյուղում մշտական աշխա-
տանքի յեն ուղարկված 12 հազար մարդ,
վորից գյուղատնտեսության մասնագետներ
3.000 հոգի: ՄՏԿայանների կադրե-
րը ստուգված և ամրապնդված էն:

Քաղաքածինների հետ միասին տարված
աշխատանքով ՄՏԿ վճռականորեն մաքր-
վեցին դասակարգայնորեն խորի և քրեյա-
կան տարրերից, հետագա վեցին իրենց կոչ-
մանը չհամապատասխանող աշխատողները:

«Հնդյակների» և «Քսանյակների» վե-
րանայման հետեւ պահպան Անդրկովկասի բո-
լոր ռայոններից հանվեցին 284 հոգի:

Վերջին յերկու տարիների ընթացքում

Հողժողկոմատի և Խորհուտնոժողկոմատի լի-
ազորության սխատեմում աշխատող գյու-
ղատնտեսական մասնագետների թիվը աճել
է մինչեւ 4,248-ի, վորից բարձրագույն
վորակ ունեցողները կազմում են 880 հոգի:
Զգալիորեն աճել է անմիջապես գյուղատըլի
տեսական արտադրության մեջ աշխատող
մասնագետների տեսակարար կշիռը:

1931 թ. մինչեւ 1933 թիվը գյուղա-
տըլնտեսական ԲՈՒՀ-երից և տեխնիկում-
ներից բաց են թողնված բարձրագույն վո-
րակ ունեցող 2375 աշխատողներ և 6943
միջին վորակի աշխատողներ:

Բացի դրանից պատրաստված են մոտ
105 հազար մասսայական վորակի աշխա-
տողներ՝ բրեկադիբներ, կոլտնտնախագահ-
ներ, տրակտորիստներ, հաշվապահներ և
այլն:

Հստ ինքյան հասկանալի յե, վոր չնա-
յած այս քանակական ցուցանիշներին, ՄՏԿ
ները, խորհանություններն ու կոլ-
տնտեսությունները դեռևս լիովին ապա-
հովված չեն մասսայական վորակի կադրե-
րով: Նախապատրաստումը անցել ե վերին
աստիճանի կարճատե կուրսերի, յերեքից
մինչեւ յերեսուն որ տեղող կուրսերի մի-
ջոցով:

Կուրսանուների ընտրությունը վոչ
միշտ և բավարար յեղել:

Կուրսերը հաճախ լիովին ապահովված
չեն յեղել համարատասիան ծրագրերով,
դրենական պիտույքներով, կամ դասատու-
ական կազմով :

Դեռ պահանջվում է տասնյակ հազա-
րամոր մարդ :

1934 թվին մասսայական վորակի կաղ-
բեր պատրաստելու պլանով նախատեսնված
ե ընդունել 68 հազար հոդի :

Կուսկացմակերպությունների, ՄՏԿ և
խորհուտեսությունների քաղքաժինների
կողմից կաղբերի պատրաստման և վերո-
հիշյալ թերությունները վերացնելու ու
1934 թվին պատրաստված կաղբերը աշխա-
տանքում ամրացնելու հարցերի նկատմամբ
լուրջ ուշադրության պայմաններում —
կոլտնտեսությունները, ՄՏԿ-ները և խորհ-
ուտեսությունները հիմնականում ապա-
հովված կլինին վորակալ կաղբերով :

1934 թվի ԳԱՐՆԱՆ ԳՅՈՒՂԱՏԻՏԵՍԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1934 թվի գարնան գյուղատնտեսական
կամպանիան ավելի պետք է ամրապնդի
Անդրկովկասի գյուղատնտեսության մեջ
1933 թվին ձեռք բերված հաջողություննե-
րը :

Ամենակարն ժամանակամիջոցում ան-
հրաժեշտ ե .

1) Գարնանացանի պլանը հասցնել մին-
չել ուսումները, կոլտնտեսությունները և
մինատնտեսությունները :

2) Կազմել տեղերում կոլտնտեսու-
թյունների արտադրական պլաններն ու բը-
րիգադիրներին արվող առաջադրություննե-
րը :

3) Մի անգամ յեկա վերանայել բբե-
գաղները, ամբազնդել բբիգաղների ո-
ղակները, և այլպիսիները գլխավորել լա-
վագույն արտադրողներ — բբիգադիրնե-
րով :

4) Ուշադրությունը պետք է կենտրո-
նացնել կարճ ժամանակում տրակտորների
ու գյուղատնտեսական ինվենտարի ձմառա-
յին նորոգման վրա կի վրա, պատրաստել
բանող անսպունները և կոլտնտեսություն-
ներում առանձնացնել կերային Փոնդերը :

5) Մաքրել և ախտահանել սերմացուն :

6) Առանց վորյեվե հապազման պետք
է մինչեւ ուսումները և կոլտնտեսություն-
ները հասցնել վնասատուների դեմ պայքա-
րելու անհրաժեշտ ապարատուրան և թույ-
ները :

1934 թվի գարնան գյուղատնտեսական
կամպանիայի խնդիրների հաջող կենսա-
գործումը կարող ե ապահովել միայն Ան-
դրկովկասի կազմակերպության մարդկան

դասակարգային մարտունակության և ըգգամնության հետագա բարձրացմամբ՝ կուլակի և նրա ազինուրայի ներգությունների և վորոգայթների դեմ մղվող պայքարում:

Լայն ծավալված կուսմասուայական յեզ կազմակերպչական աշխատանքի հեմանվրա, ապահովելով աշխատանքի յուրաքանչյուր տեղամասն գործառնական դեկավարությամբ, կուսկազմակերպությունները պետք է հասնեն գարնանացանի անպայման կատարմանը, հատկապես նրա վորակական ցուցանիշների կատարմանը:

* * *

Ուրեմն այդպիս ընկերներ, Անդրկովկասի գյուղատեստեսության զարգացման գործում վերջին յերկու տարվա յեզ հատկապես 1933 թվի ընթացքում, ինչպիս վերեվ ասվածն և ապացուցում — ձեռք են բերված անվիճելի նվաճումներ:

1934 թվին մենք ավելի մեծ նվաճումներ պետք է ձեռք բերնք գյուղատեստեսության սոցիալիստական վերակառուցման գործում:

1934 թվի կարելորագույն խնդելուն են. —

1) Ցանել 1,413,800 հեկտար տարածություն, վորից 216,150 հեկտար բաժակ, 935,550 հեկտար հացահատիկ և 264

հատար հեկտար ուրիշ կուլտուրաներ:

2) 500 հեկտար ցիտրուսային բույսեր, 1295 հեկտար թեյ, 3,180 հեկտար մրգեղեներ:

3) 1934 թվի ընթացքում յուրացնել նախատեսնված 188,5 միլիոն ռուբլի կապեկտալ ներդրում գյուղատեստեսության մեջ:

4) Հատուկ ուշագրություն դարձնել սոցիալիստական անսանապահության զարգացման ու լեռության:

5) Լավագույն արդրություն տեխնիկական կադրերը գրասենյակներից տեղափոխել խորանականությունները, Մ. Տ. Կ. Ները և կոլտնետեսությունները անամիջական գյուղատնտեսության մեջ աշխատելու համար:

6) Կոլտնետեսություններում, ՄՏԿ-ներում և խորհանականություններում, գյուղատնտեսության մեջ առաջամկոր ագրոգոռուեխնիկան յուրացնելու նպատակով՝ բարձրացնել սոցիալիստական մրցության գործը:

7) Շարունակել կոլտնետեսությունները մաքրել կուրակային և խորթ տարրերից: Յուրաքանչյուր կոլտնետեսությունում ընտրել բուշելիկայան զեկավար կադրերը: Կոլտնետեսություններում, խորհանականություններում և ՄՏ կայաններում սահմանել ամուր արտադրական կարգավահություն և

մեծ ուշադրություն դարձնել մենատնտեսին՝ վազվա կոլտնտեսականին, առեն կերպ ողնելով նրան կոլտնտեսություն մտնել:

8) Բարձրացնել կուսակցական կազմակերպությունների, կոլտնտեսականների ու մենատնտեսների հեղափոխական զգոնությունը պրոլետարական դիկտատուրայի թշնամիների, կուլտուրային մուսավաթիստների, դաշնակների, մենչեվիկների և նըրանց ազենտուրայի ու աջակիցների դեմ, մերկացնելով նրանց և նրանց խարդարանքները և դատիարակելով կոլտնտեսական մասսաներին սոցիալիզմի վոգով :

Այդ ժամանակ մենք 1934 թիվը կավարտենք ավելի մեծ նվաճումներով, քան ունեցել ենք 1933 թվին :

ՏՐԱՆՍՊՈՐՏ

Յերկրի արտադրողական ուժերի աճումը հսկայական խնդիրներ և դնում Անդրբեկովկասյան Ֆեդերացիայի տրանսպորտային ցանցի առաջ:

Դեռ Համկոմկուսի (թ) 16-րդ համագումարում արած իր գիրուցման մեջ ընկ ՍՏԱԼԻՆԸ ընդգծելով տրանսպորտի խոշորագույն նշանակությունը վոչ միայն ժողովրդական տնտեսության համար, այլև յերկրի պաշտպանութակությունն ամրապնդելով համար, մատնանշել ե, վոր կուսակցության խնդիրն և «Վերջապես բոլշեվիկներին կաչել տրանսպորտի գործին յեվառաջ շարժել նրան» :

Ինչ հանրագումարներով ենք մենք գալիս մեր համագումարին տրանսպորտային անտեսության բնագավառում :

Անդրկովկասյան յերկաթուղու բեռնային շրջանառությունն ավելացել է մոտ 200 հազար տոննոյլ 1930 թվի համեմատությամբ : Ռուգեվորների գոխադրությունը՝ 1930 թվին գոխադրված է 17,3 միլիոն ուղեվոր, իսկ 1933 թվին 26 միլիոն ուղեվոր :

Ապրանքային պարկի վագոնի շրջանառությունն իջել է որական 7,22-ից մինչև 6,77-ը : Ցիստերնների շրջանառությունը որական 8,43-ից իջել է մինչև 7,65-ը :

Ապրանքային պարկի վագոնի միջին որական վաղքը ավելացել է 14 կիլոմետրով : Ցիստերնների միջին որական վաղքն ավելացել է 8 կիլոմետրով :

1933 թվին պլանից 8 տոկոսով ավելի յև չպահ փոխվել :

Կերջին ժամանակներս վորոշ չափով պակասել են նորոգման յենթակա չողեկառ քերի տոկոսը, վորոնք վերջին յերեք տարիների ընթացքում կայունացել են 21-22 տոկոս մակարդակի վրա :

Ելեքտրականացվել են Սուրբի լեռնահանքը, վորը 30 տոկոսով ավելացրել են չորս կառքերի չարժման արագությունը, 43 տոկոսով բաց թողնելու և 92,5 տոկոս փոխարքելու կարողությունը, իսկ փոխարքությունների ինքնարժեքը իջեցրել է 30 տոկոսով :

Նոր յերկաթուղային շինարարության մյուս հիմնական աշխատանքներից հիշատակենք. Ախալ-Մենակի-Ռչեմչերի (80 կիլոմետր), Թքարչելի-Ռչեմչերի (27 կիլոմետր), Ալյաթ-Մինչելանի (283 կիլոմետր), Մինչեկան-Ղափան (39 կիլոմետր) իսկ ընդամենը Անդրկովկասում — 444 կի-

լոմետր, այս թվից Ազրբեջանում 318 կիլոմետր և Վրաստանում 113 կիլոմետր :

Աղստաֆա - Նավթրուղ տեղամասում ավտոբուկացում և անցկացված 82 կիլոմետրի վրա :

Սակայն Անդրկովկասյան յերկաթուղու աշխատանքում դեռ կան խոչոր թերություններ :

Ապրանքային պարկի, ցիստերնների առևտուրական արագության վագոնների շրջանառության նորմաները չեն կատարվում, գուգերթը լրիվ գեռ չի կիրառվում, գեռ մեծ չափով այրվում են բուքսերը, ճանապարհի հիմնական նորոգումը կատարված է միայն 87 տոկոսով, պլանային աշխատանքները — 80 տոկոսով :

Դեռ բավականաչափ չեն յուրացված ելեքտրաքարչի հսկայական տնտեսական առավելությունները : Յերթեկության ժամացուցակով զնում են միայն չորեկառքերի 46 տոկոսը :

Դրա հետեւանդով քեննաշրջանառության անմասն տեմպերը հետ են մնում ժողովնեսության տեմպերից :

Այսպես, հնդամյակի ընթացքում (1929 մինչև 1933 թիվը) նավթի արտադրությունը ավելացել է մինչև 142 տոկոս, նավթի փոխարքությունը մինչև 121,6 տոկոս, քարածուխի արտադրությունը — 256,9

տոկոսով, իսկ նրա փոխադրությունը — 219,4 տոկոսով:

Անդրկովկասյան յերկաթուղին վորոշ չափով սահմանավորում է Անդրկովկասյան մեղերացիայի ժողովրդական տնտեսության զարգացումը:

Հիմնական պատճառները կայանում են նրանում, վոր՝

1. Յերկաթուղին չի վերակառուցել իր աշխատանքները չամկոմկուսի(բ) կենտկոմի և Խորհրդային Միության ժողկոմինորհի տրանսպորտի մասին կայացրած վորոշումների համապատասխան:

2. Աշխատանքի գրասենյակային բյուրոկրատական մեթոդները դեռ չեն վերացված:

3. Վարչական ապարատներից մասնագետներին արտադրություն (յերկաթուղաբիթ) փոխադրելը բավարար չափով չի կատարված:

4. Իսկական պայքարը չի ծավալվել խիստ կարգապահության համար:

Նավթի փոխադրման պլանի պարքերական տապալման պատճառները հանդիսացել են նավթի լեցման վատ կազմակերպումն ու ցիստերների խայտառակ շրջանուությունը: Ցիստերնները լեցնելու համար ժամանակին չեն բերվում և վատ են նո-

րոգված: Լեցման պրոցեսը ուսցիոնալիքա- շիայի չի յենթարկված:

Վերջապես Անդրկովկասյան յերկարու ղու հետ մնալը ժողովրդական տնտեսության անումից առաջացել ե նրա տեխնիկապես անբավարար զինվածությունից:

Վերջին ժամանակներս քաղբաժնների կազմակերպումը, դիրեկցիայի վերակառուցումը և աշխատավարձի վերակառուցումը չամկոմկուսի (բ) կենտկոմի և Խորհրդային Միության ժողկոմինորհի 1933 թվի հուլիսի 8-ի վորոշման հիման վրա, մի շարք մասնագետների գրասենյակներից արտադրություն (յերկաթուղաբիթ) փոխադրելը տեղաշարժ են առաջցրել Անդրկովկասյան յերկաթուղու աշխատանքի մեջ: Խնդիրը կայանում է նրանում, վոր հետագա աշխատանքով ամենակարճ ժամկետներում լուրջ վերելքի հանենք մեր յերկաթուղային տնտեսության մեջ:

Այսուեղ ամենագլխավորն ե՝ վնասկանորեն բարձրացնել կարգապահությունը և պամուր հարվածել քափրփակածությանն ու անփութությանը:

Պետք է խիստ կարգապահություն ըստ տեղծել վերեկց - ներքեւ: Այլապես մենք չենք կարող կանոնավորել փոխադրությունները:

Համկոմկուսի (թ) Կենտկոմի, Խորհրդ դային Միուրյան ժողովմխորի առաջ մեր միջնորդությամբ ընթացիկ տարում 70 մի լին ուստի յի հատկացված Անդրկովկաս- յան յերկարուղու հիմնական կառուցվածք ների արմատական վերաշինման համար։

1934 թվին մեր առաջ իրենց կարևո- րությամբ ու ծավալով հսկայական խրն- դիրներ են գրված։ 1. Բաղվի և Փոթիի հանդուցների վերակառուցումը, 2. Բաղ- վի և Թիֆլիսի միջև մասնավորապես Հաջի կարուլ - Յելլախ մի շարք տեղամասերում յերկրորդ գծի կառուցումը, Թիֆլիս-Խա- չուրի տեղամասի ելեքտրիֆիկացիան, 3. Ավտորոկացման աշխատանքները։ 4. Սև ծովյան յերկաթուղու կառուցման շարու- նակությունը և այլն։

1934 թիվը յերկաթուղուն մեծ պա- հանջներ կառաջադրի, մանավանդ նավթա փոխադրումների գծով։ Ժամանակին փո- խադրել սահմանված քանակությամբ նավք և ուրիշ բեռներ — դա մեր խնդիրն է, զար յերկարուղին պետք է կատարի ինչ ել զար լինի։

ԱՆՌԵԼ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Աճող ժողովրդական տնտեսությունը անուելս ճանապարհների ավելի մեծ պա- հանջ և դնում։

ԱՄՖԻՀ անուելս ճանապարհների ընդ- հանուր տարածությունը աճում է. 1933 թվի վերջին նա հասել եր 28.954 կիլո- մետրի (1931 թվի 25.014 կիլոմետրի դի- մաց), բայց ամբողջ ճանապարհային ցան ցում խիճով ծածկված ճանապարհները են միայն 8,865 կիլոմետր։

Նոր ճանապարհների շինարարության և նորոգման գործում մեծ դեր է խաղում տեղական բնակչության աշխատանքային մասնակցությունը։ 1933 թվին բնակչու- թյան գյուղատանքային ժամանակցությամբ թյան գյուղատանքային ժամանակցությամբ ժամանակի ճանապարհային աշխա- տանքներ են կատարվել 19.527.000 ոռու- լու։

Սակայն անուելս տրանսպրտն այնու- ամենայնիվ հանդիսանում է հետամեաց տեղամաս ու անբավարար և սպասարկում ժողովրդական տնտեսությանը։ Ճանապարհ ժողովրդական տնտեսությանը։ Ճանապարհ ների մեծ մասը պետքական է միայն սայ- լային տրանսպրտի համար։ Մենք, բացա- ռությամբ չայստանի, ճանապարհներով քիչ ենք զբաղվել։

Դրա համար ճանապարհների զգալի մասի շահագործման վորակը գտնվում է միանգամայն ցածր մակարդակի վրա։ Շի- նարարությունը մինչև վերջին ժամանակ- ներս անողանային բնույթ ուներ։ Շինա- րարության պլանները չելին կատարվում։

Ճանապարհային աշխատանքների մեջենացումը թույլ է:

Միութենական և տեղական բյուջեներով 1933 թվի հատկացումները լրիվ չեն բուրացված: Այսպես՝ Աղբճանուրանսը 11 ամսվաք ընթացքում յուրացրել և Աղբեջանին հատկացրած դումարների միայն 70 տոկոսը:

Մի շարք ռայուններում (Դիլիջանի, Կաղբեկի և այլն) բնակչության աշխ. մասնակցության ուշադրությունը չի դարձվում:

Մենք պետք ենք

1. Ամբողջովին յուրացնենք հետզետե աճող կապիտալ ներդրումները (1934 թվին դրանք հասնում են 32 միլիոն ռուբլու):

2. Ավելի նպատակահարմար ոգտագործենք այն լրացուցիչ աչքի ընկալող գումար սերը, վոր ստանում են ճանապարհային չի նարարությունը տեղական բնակչության աշխատանակցությունից:

3. Մեխանիկացիայի յենթարկենք ճանապարհային աշխատանքը: Բարձրացնենք ավտոտրանսպորտի տեսակարար կշիռը մեր տրանսպորտային սիստեմում:

Ճանապարհաները — մեր սոցիալիստական շինարարության աշխատանքի կարևորագույն տեղամասն են և նրանց պետք է մաքսիմում ուշադրություն դարձվի: Այս

լրագես բեռները, մանավանդ գյուղատրն-տեսական բեռները, կմնան ուայոնների խոր քերում ընկած առանց փոխադրության:

ԿԱՍՊԻՅ ՇՈՎԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐ

Խոսելով նավթի մասին, յես արդեն նշել եմ, թե ինչպիսի կարևոր նշանակություն ունի կասպարը նավթափոխադրման ասպարիցում:

Բագլից փոխադրվող նավթամքերին րի յերկու յերրորդականը ընկեռում ե նրա վրա:

1933 թվին կասպարի փոխադրումների ընդհանուր մասայում նավթաբեռների տեսակարար կշիռը հավասար է յեղել 90 տոկոսի:

Նավթահանման աճի համաձայն կասպարի նավթափոխադրման չափը տարեցարի աճում է:

1933 թվի նավթափոխադրման տարեկան պլանը կատարվել է 100,2 տոկոսով:

1934 թվին կասպարի նավթափոխադրման պլանը գգալիորեն ավելանում է՝ հանելով 12.336.000 տոսնի:

Կասպարի փոխադրությունների չափերը հետզետե աճում են, մինչդեռ ունեցած նավերը և նրանց դրությունը չեն ապահովությունը պարագաների համար:

վում փոխադրումների կատարումը : Նայե
րը սաստիկ մաշված են, չատ նավերի կաթ
սաներ իրենց ժամկետն անց են կացրել և
այլն :

Կասպարի Հարցը Համկոմկուսի (բ)
Անդրյերկոմի կողմից դրվել է Համկոմկու
սի (բ) կենտկոմի առաջ :

Դրա հետևանքով միջոցներ են ձեռք
առնվել, վորոնց մասին յես արդեն ասա-
ցի, — նավերի կառուցման ավարտումը, նր
ամոց նյութեր և սարքավորումներ մատա-
կարաբելը, ընկ . Զոֆի նշանակումը և
այլն :

Նավթափոխադրման պլանը 1934 թվին
սկսոք և կատարվել :

Կ Ա Պ

Գերշին տարիներու կապի գործն Անդրյ
կոմկոմում վորոշ նվաճումներ ունի :
Կապի միջոցների արժեքը 1931 թվի
17.681.000 ռուբլուց հասել է 1933 թվին
36 միլիոն ռուբլու :

Բագիոհազորդիչների թիվը 7-ից մ-
շել է 20-ի :

Բազմում հեռախոսային ավտոմատ կա-
յան և կառուցվել և մոտ ժամանակներու
այդպիսի մի կայան ել գործի յե գցվելու
թիվի բառում :

Սակայն կապի տնտեսությունը մի
շաբաթ խոշոր թերություններ ունի և զգա-
լիորեն հետ և մնում ժողովրդական տնտե-
սության ու աշխատավոր մասաների ա-
նող պահանջներից :

Փոստային կապի աշխատանքների վո-
րակը չի կարող բավարար նախաչիել :

Մի շարք ռայոններում (Զաքանթալա-
յի, Ղաղամին և Լանջխուտի) շաբաթներով
փոստը չեն փոխադրում . 1933 թվի միայն
առաջին կիսամյակում 19 հազար բողոք և
յեղել թղթակցությունները չհասցնելու վե-

բարեբյալ, իսկ գեռ վո՞րքան տուժողներ
ել կան, վոր չեն բողոքել:

Այդ գեռ քիչ է. հաճախ են պատա-
հում զողության և վատնումների գեղքե-
րը: Բավական ե ասել, վոր 1933 թվի 10
տարվա ընթացքում զողությունների յեկ
վատնումների գումարը 500 հազար սուր-
լուց ավելի յե:

Կապի որգանները պետք ե վճռական
րեն և արագ կերպով վերակառուցվեն. ու-
ժեղ քափով բարձրացնեն աշխատանքի վո-
րակը և մինչև վերջ տանեն ապարատի զբ-
տումը խորք ու հանցագործ տարրերից:

Մայոնները, դյուղերը և քաղբաժննե
րը ամենակարձ ժամկետում պետք ե լիո-
վին, նորմալ և առանց ընդհատումների ա-
պահովեն փոստով, հետադրով և հեռախո-
սային կապով:

Ներկայումս կապի գեկառլարությունը
փոխված է: Մենք այնտեղ դրել ենք բար-
վեցիներին ծանոթ ընկ. Գաբեր-կորնին և
կարծում ենք, վոր կապի դործը վերջապես
կկանոնավորվի: Կապին ուժեղ ոգնություն
պետք ե ցույց տան կուսակցական կազմա-
կերպությունները, վորովհետև առանց այդ
աջակցության, իհարկե, վոչ վոք, անգամ
ամենալավագույն աշխատողը, կապի գոր-
ծում վոչինչ չի կարող անել:

ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ՅԵՎ ԱՊՐԱՆՔԱՋՐՁԱՆԱ- ՌՈՒԹՅՈՒՆԸ

Արդյունաբերության և դյուղա-
տնտեսության բանվորների զգալի ա-
ճում. գործազրկության լիակատար վե-
րացում, հսմարյա բոլոր ձեռնարկու-
թյուններում յոթ ժամյա բանվորական որ-
վա անցնելը, աշխատասխարձի բարձրացում,
սոցիալական ապահովագրման բյուջե-
յի ահազին ընդլայնում, կոմունալ և բնա-
կարանային շինարարության դարձացում,
հասարակական սննդի ձեռնարկություննե-
րի աճում.—այս ամենը վկայում են բան-
վորների և կուտնասային մասսաների
նյութական բարեկեցության անշեղ բարձ-
րացումը:

Սակայն, չնայած այդ հարցերից յուրա
քանչյուրի կարևորությանը, նրանց վրա
կանգ չեմ առնի, քանի վոր հանդապետա-

կան կուս. Համագումարներում արդեն բերվել են թվական նյութեր յեզ փաստական տվյալներ, վորոնք պատկերացնում են Անդրկովկասի հանրապետությունների աշխատավոր մասսաների նյութական - կենցաղային և կուլտուրական մակարդակի աճումը:

Յես, ուզում եմ համագումարի ուշադրությունը կենտրոնացնել միայն ներկա մոմենտում մի ամենակարևոր հարցի - քաղաքի և գյուղի միջև յեղած ապրանքարժանառության և նրա հետագա զարգացման խնդրի վրա:

Մեր կուսակցությունը հաշվետվական ժամանակաշրջանում մի անգամ չե, վոր Համկոմիկուսի (թ) կենտկոմի պլենումի բանաձեռքում և հատուկ վարչութեաներում շեշտել է խորհրդային առևտրի զարգացման անհրաժեշտությունը և մի ամբողջ շարք գործ նական ցուցմունքներ ե տվել այդ ուղղությամբ աշխատանքը ծավալելու համար:

Սակայն այժմ, յերբ արդյունաբերության և հիմնականում գյուղատնտեսության պրոբլեմն արդեն լուծված է, քաղաքի և գյուղի միջև ապրանքաշրջանառության ամեն կերպ ծավալման խնդրն առանձնապես այժմեական և դառնում:

Մեր կուսակցության առաջնորդ ընկ. ՍՏԱԼԻՆԸ վերջերս նոր ուժով մրել ե այդ

հարցը, մեր ուշադրությունը գրավելով նըրական վրա:

Վո՞րն ե վերջին տարիներս այդ ասպարիզում կատարած մեր աշխատանքի հիմնական հանրագումարը:

Առաջին հնգամյակի հաջողությունները, արդյուարերության, մասնավորապես քերեկ և սննդի արդյունաբերության արտադրանքի անումը, գյուղատնտեսության կուլեկտիվացման անումը, ֆազեֆի և գյուղի միջև արտադրական կապի ամրապնդումը, և, այդ բանի հիման վրա, բանվորական ու կոլտնտեսական մասսաների բարեկեցության անումը — ապահովել են ապրանքաշրջանառության նյութական բազայի ընդլայնումը:

Ամբողջ հատավաճառքի ըրչանառությունը, վոր 1927-28 թվին յեղել ե 703 ժիշտուն սուրբի, 1933-ին հասել ե 2,200 միլիոն սուրբու:

Հստ վորում, յեթե 1928 թվին սկզբին Անդրկովկասում մասնավոր առևտրականներուն և 21 հազարից ավելի առևտրական կետեր, ապա 1933 թվին մասնավոր առևտուրը համարյա ստացիոնար ցանց չունել:

Սպառողական կոռուկրացիայի — հայայնացրած առևտրի այդ առաջատար ողակի ըրչանառությունը 1933 թվին հասել ե

1,100 միլիոն ռուբլու (1928-29 թվի 546 միլիոն ռուբլու գիմաց), իսկ նրա մանրավաճառքի ցանցը 3,700 կետից բարձրացել է 11,569 կետի:

Առևտրական ցանցի ծավալման հետ մեսախն՝ սպառողական կոռպերացիան ստեղծել է իր սեփական ոժանդակիչ ձեռնարկությունները, վորոնք մեծացրել են նրա պարբենացին ռեսուրսները. — Կազմակերպված են քաղաքամերձ տնտեսություններ, կառուցված են բանջարապահություններ, (Բագու, Թիֆլիս, Յերևան և այլն), ստեղծված ե սահցարանների ցանց (Փոթի, Յերևան, Բագու և այլն), կառուցված են յերեք խոշոր հացագործարաններ Թիֆլիսում, Բագում, Յերևանում, ավարտվում ե ելի յերկուսի կառուցումը Բագում, մեկն ել Թիֆլիսում:

Բավարկանաչափի աճել ե ապրանքաշրջան նառությունը պետական սիստեմում. — 1931 թվի 117 միլիոնից հասել է 452 միլիոն ռուբլու 1933 թվին: Պետական վարչությունը մեծացել է ավելի քան չորս անգամ (1931 թվի 940 կետից 1933 թվի հոկտեմբերի մեջին հասել է 3,800-ի):

Սակայն, սովորակողերացիայի և պետառությունների աշխատանքում կան մի շարք երական թերություններ. —

1. Ապրանքների շրջանառությունը դանդաղ է կատարվում. Զարկայուղի սիստե-

մում նա հասնում է 25 որվա, իսկ պետական վարչությունը՝ 24 որվա՝ նորմայի 21 որվա դիմաց: Դրա հետեւանգույթ պահպատ ներում ապրանքների մնացորդները սիստեմատիկորեն ավելի յեն լինում սահմանված չափերից:

2. Շրջանառության ծախսերն զգալի չափով գերազանցում են գոյություն ունեցող նորմաներից:

3. Աղմբնիստրատիվ — վարչական ապարատը թանգ և նստում:

4. Լավագույն, փորձված աշխատողները նստած են գրասենյակներում, չեն ուղարկված պահպատները, բազաները և խանութները:

5. Մինչև այժմ աշխատավարձի հավասարանը գրասենյակներում է շահագործվածությունը աշխատանքից ցուցանիշները բարձարցնելու գործում: Դրա հետեւանքը՝ բարենպահութիւնը հասունությունն է:

6. Ստուգումը ցույց է տվել, վոր ասխատքա - կոտաքերատիվացին կազմելով մեծ չտիկով աղատաված են զասակարգայնորեն խորթ տարեկով (10,8 տոկոս): Կուս. կոմյերի լուսական խավը բավարար չէ:

7. Վատնումների և գողությունների պեմ պայքարը բառակամաչտի ծավալման չափերում:

Թեկուր կոլտնտեսային առևետուրը համեմատմբար լայնորեն զարգացել է, սակայն նա յել ունի մի շարք զդավի թերություններ. — Կոլտնտեսական շուկաները քաղաքներում չեն ապահովված անհրաժեշտ չենքերով, անասունները կապելու տեղերով և այլն, շուկաների սանիտարական դրությունը չափազանց անբավարար է: Շուկաներում սպեկուլյացիա տեղի ունի մը թերքների «կոմիյոն» վաճառքի անվան տակ և այլն:

Համկոմկուսի (թ) Անդրյերկոմի բյուլեն 1933 թվի ոգոստոսի 15-ին մանրամասըն ֆենել ե ապրանքաշրջանառության հարցը և մի շարք գործնական վորոշմներ ե հանել՝ նրա հետագա ծավալման նկատմամբ:

Դրանից հետո վորոշ տեղաշարժեր կան, բայց դա ֆիզ է:

Թեթև և սննդի արդյունաբերության, լայնապատճի առարկաների մեծացող արտադրությունը, քաղաքի և կոլտնտեսական դյուզի աշխատավորների նյութական բարեկեցության և կոլտնտեսական մակարդակի արագ աճման հետ միասին, ավելի ու ամենի բարձր պահանջներ են ներկայացնում սպառկոռակերացիայի և պետականության սիստեմի բոլոր ողակների աշխատանքի վորան նկատմամբ:

Մեր անհետաձգելի խնդիրներն են. — 1. Լիովին վերացնել սպառկոռակերացիայի և պետականության պահեստներում բազաներում ապրանքների կուտակումը:

2. Իջեցնել ըրջանառության ծախսերը և հասցնել սահմանված չափերին:

3. Լավագույն աշխատողներին ուղարկել պահեստներն ու խանութները, վերջապահ աշխատավարձի հավասարանքին, մինչև վերջ հասցնել անինա պայքարը վատնումների ու գողությունների դեմ:

4. Ապրանքատար ցանցը ամրացնել ամսակուր և ստուդիած կարգերով:

Ապրանքաշրջանառության ծավալման, աշխատանքի վրակի բարձրացման հարցերը այդ ասպարեզում պետք ե մեր կուտակական կարգմակերպությունների ուշադրության կենտրոնում լինեն:

Կոռպերացիայում և պետականություն աշխատելը — դա կարևորագույն, ամենապատախան և մարտական տեղականության պարզող աշխատանքն է և մենք այսուղ ևս պետք ե կովենք համառորեն, բոլշևիկոնքնեն:

Ընկ. ՍՏԱԼԻՆԸ մատնանշել ե, վոր ապահանքանառության հարցերի լուծումն այնքան ել հեշտ չե, բայց ավելի հեշտ և այնքան հարցերից, վոր արդեն լուծված են

և վատահություն ե հայտնել, վոր խոր-
հուրդների չերկիրը այդ հարցերը կլուծի:

Այստեղ, Անդրկովկասի կոմունիստա-
կան կազմակերպությունների համագումա-
րում, մենք պետք են խոստանանք մեր կու-
սակցության առաջնորդին, վոր մեր հետա-
գա աշխատանքով մենք կապահովենք այդ
հարցերի հաջող լուծումը բայ աշխատան-
քի այդ տեղաժամանում:

ՍԶԳԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇՐՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մեր հաջողությունները Անդրֆեդերա-
ցիայի ինդուստրացման, կոլտնտեսություն-
ների կազմակերպչա - տնտեսական ամրա-
պլնուման դործում, Անդրկովկասի աշխատա-
վորների նյութական բարեկեցության ան-
ընդհատ աճումը, այդ բոլորը պայմանա-
վորել են Անդրֆեդերացիայի հանրապետու-
թյունների ազգային - կուլտուրական չի-
նարարության վերելքը, - ձեզով ազգա-
յին, բովանդակությամբ սոցիալիստական
կուլտուրայի հսկայական զարգացումը:

ՄԻՋԱԿԱՎԱՐ ՄԻՋԱԿԱՎԱՐ ԴՊՐՈՑ

Մենք 1933 թվին հիմնականում ավար-
տել ենք ընդհանուր տարրական ուսման
գործն Անդրֆեդերացիայի բոլոր հանրա-
պետություններում:

Առաջին հակամայակի սկզբին (1928-29
թվին) մենք դպրոցներում ընդունել ենք

565,244 յերեխա, իսկ 1933 թվին
1,291,222:

Գյուղի տարրական և միջնակարգ դըս
բոցներում սովորողների թիվն առաջին հըն
դամյակում աճել է 242,9 տոկոսով:

Անդրֆեռքրացիայում մեծ նշանակու-
թյուն ունի աղջիկներին (մանավանդ թիր
քուհիներին) դպրոց գրավելու հարցը: 1928
թվից մինչև 33 թիվը սովորող աղջիկների
թիվը 191,158 հոգուց հասել է 451,470-ի:

Այս տարի զգալի հաջողություններ ենք
ունեցել կայուն զասալքքեր ստեղծելու մա-
սին Համկոմկոսի (թ) կենտկոմի վորոշու-
մըն իրացնելու գործում, ճիշտ և, այդ դա-
սադրքերը Հրատարակելիս ունեցել ենք ա-
ռանձին սիսալներ, վորոնց մասին այստեղ
չեմ խոսի:

Վերջին տարիներս զգալի կերպով բարե-
լավվել ե ուսուցչության նյութական դրու-
թյունը (աշխատավարձի աճում, մատակա-
րարում), սակայն տեղական կուսակցա-
կան ու խորհրդային կազմակերպություն-
ների կողմից ցույց տրված ուշադրությու-
նը դեպի ուսուցչությունը միանդամայն
անբավարար է: Անհրաժեշտ է վճռականո-
ւեն բարեխռնել դպրոցի կուսդեկավարու-
թյունը: Մեր կուսակցական կազմակերպու-
թյունները պետք է դպրոցը նույնական կոմի-
թեա ու գործնականորեն դեկավարեն, ինչ-

պես վոր այդ բանը նրանք իրականացնում
են սոցիալիստական շինարարության զար-
գացման տնտեսական տեղամասերում:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՌՈՑ

Անդրկովկասում պակաս հաջողություն
ներ չենք ունեցել բարձրագույն կրթության
զարգացման գործում: Այն յերկրում, վոր
տեղ մինչև հեղափոխությունը բարձրա-
գույն դպրոց չի յեղել, բայց առությամբ
կանանց մասնավոր կուրսերի (թիֆլիս),
1933 թվին 45 բարձրագույն տեխնիկական
գյուղատնտեսական, բժշկական ու մարկա-
րաժական ուսումնական հաստատություն
ներ են ստեղծվել՝ 31,225 ուսանողներով,
վորոնց 15 տոկոսը բանկուներ են:

Մենք մեծ աշխատանք ենք տարել բարձ-
րագույն դպրոցի մասին և ՍՀՄ Կենտգործ-
կոմի 1932 թվի սեպտեմբերի 19-ի վորոշու-
մըն իրականացնելու գործում, վորի ենտե-
մանով նկատելի կերպով բարձրացել ե
դպրոցական աշխատանքի վորակը:

Կուսակցության Անդրյերկոմն ուղղել է
չին զեկավարության սխալները, վորը բարձ-
րագույն կրթության ամբողջ սիստեմը
յերկրում կենտրոնացրել եր, յել բարձրա-
գույն կրթության զեկավարությունը Համ-
կոմկուսի (թ) կենտկոմի 1931 թվի գորոշ
ման համաձայն, հիմնականում հանձնել ե

Հանրապետություններին՝ հենց դրանով ել բարձրագույն դպրոցական հաստատությունները մուեցնելով արտադրությանը։ Յուրաքանչյուր տարի աճում և մեր ԲՈՒՀ-երից ու ԲՏՈՒՀ-երից բաց թողնվող մասնագետների թիվը՝ Անդրֆեդերացիացի ԲՈՒՀ-երը և ԲՏՈՒՀ-ները՝ 1928-ից մինչև 1932 թ. բաց են թողել 11,650 մասնադիմ, գործնցից՝ 3731 ինժեներ, 2004 դյուզատնես, 1693 բժիշկ ու 1844 մանկավարժ։ 1933 թվին բաց են թողնված 2500 մասնագետ։

Սակայն մեր ԲՈՒՀ-երի և ԲՏՈՒՀ-ների տված մասնագետների պատրաստության վրակը և գիտելիքների մակարդակն այնու ամենայնիվ բավարար չէ։

ԳԻՏԱԿԻՆ ՏԵԽԱԿԱՆ ՖՐՈՆՏ

Հաշվետու ժամանակաշրջանում գիտական – հետազոտական հիմնարկությունների անցնած գործությունների մասնակիությունների ցանցը զգալիորեն անել է։

Ենթե 1929 թվին Անդրֆեդերացիայում գյուղատնտեսության պրոբլեմը դիտականորեն մշակող միայն մի ինստիտուտ ենք ունեցել, ապա 1933 թվին 9 այլպիսի ինստիտուտ ունենք։ Մանր արգունաբերության սրտեմում 1929 թ. մինչև 2 ինստիտուտ ենք ունեցել, իսկ 1933 թվին ունենք հինգը։

Մի շարք գիտական – հետազոտական ինստիտուտներ մշակել են կարեորագույն պրոբլեմներ, վոր զգալի չափով արդեն գործադրվում են ԱԱՖՆՀ արդյունաբերության և գյուղական տնտեսության մեջ։ Այսպես՝ Անդրկովկասյան բաժնակի ինստիտուտը, իր աշխատանքի հետեւնքով կարողացել է Անդրկովկաս մացնել բամբակի մի շարք նոր տեսակներ՝ բարձր բերքատվությամբ ու յերկար թերթով և այլն։

Անդրկովկասի կառուցողական ինստիտուտը, բետոնի համող բաղադրություն կազմելու չորհիվ, կարողացել է բետոնի վրամկը բարձրացնել ու նրա ինքնարժեքն իջնել։ Անդրկովկասի կառուցողական ինստիտուտի հաջողությունները յերկրաշարժին դիմացող կառուցումների նկատմամբ այնքան մեծ են յեղել, վոր Խորհրդային Միության Ծանր Արդյունաբերության ժողովամատը վակել է Միության մյուս բոլոր գիտական հետազոտական ինստիտուտների յերկրաշարժա – դիմացկունկառուցումների բաժնմունքները, հանձնելով այդ պրոբլեմների մշակումը բացառապես Անդրկովկասյան կառուցողական ինստիտուտին։

Իրենց աշխատանքում լուրջ արդյունք են ձեռք բերել նույնպես և թեյի ինստի-

տուան ու գործնական հանքարանության
ինստիտուտը:

Սակայն այդ ինստիտուտի կապը
ժողովրդական տնտեսության ասպարի-
զում մեր ընթացիկ գործնական աշխատան-
քի հետ բավարար չէ:

Յերկրի կուս. կազմակերպությունները
գգալի հաջողություններ են ունեցել նաև
մարքս - լենինյան գիտության համար
մոլոր պայքարում: Վերջին յերեք տա-
րում մարքսիզմ - լենինիզմի ինստիտուտ-
ներ են ստեղծվել Վրաստանում, Ադրբեյ-
չանում ու Հայաստանում:

Մեր խնդիրը կայանում է նրանում,
վոր այդ կազմակերպությունները վոչ մի-
այն գպրոցական հիմնարկություններ դարձ-
նենք, այլ և մորքս-լենինյան գիտական-
հետազոտական աշխատանքի կենորոնաց-
ման վայրեր:

Ընկ. ՍՏԱԼԻՆԻ - «Պրոլետարիայա
րեվոլյուցիա» ժուրնալի խմբագրությանը
գրած նամակն ահագին դեր է խաղացել՝
գաղափարախոսական ֆրոնտում պայքարն
ուժեղացնելու, մեր գիտական - տեսական
և կուսակցական գրականության մեջ խց-
կած հակա-լենինյան քեռիամերի, հա-
կահեղափոխական տրոցկիստական և նա-

յիմանալիստական դրույթների մերկացման
գործում:

Ընկ. ՍՏԱԼԻՆԻ ցուցմունքներն իրաց-
նելու նպատակով, մենք վերպնայել ենք
գրեթե ամբողջ լույս տեսած տպագրական
արտադրանքը; վերանայված ու վորակա-
պես բարելավված ե ԲՈՒՀ-երի և ԲԺՌՀ-
ների սոցանտեսական ամբիոնների վարիչ-
ների և հասարակական գիտությունների ա-
վանդունների կազմը, ստուգված են մարք-
սիզմ - լենինիզմի կլասիկների թարգմանու-
թյուններն, ըստ վորում ամենակոպիտ
սխալներն են գտնված ամենից առաջ ընկ.
ՍՏԱԼԻՆԻ «Լենինիզմի հարցերը» գրքի և
նրա մի շարք ուրիշ աշխատությունների
թարգմանություններում:

Անդրկովկասի բոլոր հանրապետու-
թյուններում մարքսիզմ - լենինիզմի կլասիկ
ների արգեն շատ կարեռագույն աշխա-
տությունները հրատարակված են:

Սակայն, մեր գիտական հետազոտական
աշխատանքը հետ և մերս մանավանդ
կուսակցության պատմության և Անդրկով
կասի հեղափոխական շարժման բնագավա-
ռում:

Անդրկովկասում բոլեկիզմի և հեղափո-
խական շարժման պատմությանը վերաբե-
րող աշխատություններում՝ մենք մինչեւ

այժմ մի շարք ամենակողիս սխալներ :
մեր գիտական - տեխնիկական գրականու-
թյան մեջ հակա - լենինյան դրույթներ
խցկելու փաստեր ունենք :

Ուղղակի պետք է ասել, վոր Անդրկով
կասի հեղափոխական շարժման պատմու-
թյունն, բոլշևիկյան կազմակերպություն-
ների պատմությունը բավականաչափ չի
լուսաբանվում մեր բոլոր յերեք հանրապե-
տուր-յուններում : Յես արդեն Վրաստանի
կոմկուսի համագումարում առել եմ, վոր
Կովկասի հեղափոխական շարժման և բոլ-
շևիկյան կազմակերպությունների ամ-
բողջ պատմությունը անխղելիորեն կապ-
ված է լնկ . ՍՏԱԼԻՆԻ անվան հետ (Ճափա-
հարություններ) :

Այնու ամենայնիվ՝ Անդրկովկասի բոլ
շերիզմի պատմության վերաբերմամբ մին
չեմ այժմ բոլոր գրածները մոչ մի չափով
չեմ արտահայտում ընկ . ՍՏԱԼԻՆԻ գեկա-
վար գերը՝ մեղնում բոլշևիկյան կուսակ-
ցության կազմակերպման ու զարդացման
գործում :

Մենք վոչ վոքի թույլ չենք տա աղա-
վաղել կուսակցության պատմությունը
ինչ հասակ ու ստաժ ել վոր նա ունենա :

Ով - ով, իսկ Անդրկովկասի բոլե-
քնիմերը պետք է ամենից առաջ և ամե-
նայն խնամքով տան Անդրկովկասի հեղա-

փոխական շարժման պատմությունը, բոլ-
շևիկյան կազմակերպությունների խսկա-
կան պատմությունը և ընկ . ՍՏԱԼԻՆԻ հսկա
յական դերը, վարպետ նրա հիմնադրի,
կազմակերպչի ու դեկավարի (Ճափահա-
րություններ) :

Այդ մասին մենք ուժեղ կերպով չե-
տել ենք Վրաստանի կոմկուսի համագու-
մարում և կրկնում ենք այսուղ՝ Անդրկով
կասան համագումարում :

Գիտական - տեսական աշխատանքի բը
նագավառում մեր խնդիրը կայանում է նը
րանում, վոր ել ավելի բարձրացնենք կու
սակցական կազմակերպությունների յեկ ,
մանաւաճնող, անմիջակառնորդն դադարիտրո-
խոսական ճակատում աշխատող ընկերների
դդոնությունը :

Պետք է ամենամոտ ժամանակներս ա-
վարտել մարքսիզմի - լենինիզմի կլասիկ-
ների բոլոր հիմնական յերկերն ազգային
լեզուներով հրատարակելու գործը, առան-
ձին ուշադրություն զարձնելով Մարքսի, Են
գելսի, Լենինի և Ստալինի առանձին բրո-
ցյուրների հրատարակությանը՝ մասսայա-
կան ընթերցողների համար :

Անդրամեջ է մեր կազմակերպված ՍՏԱ
ԼԻՆԻ անվ . ինստիտ . աշխատանքն այնպես

Վերակառուցել, վոր այն դարձնեմք Վրան
տանի և Անդրկովկասի բոլշևիզմի պատմու
թյան ու հեղափոխական շարժման պատ-
մության հարցերի ուսումնական իրության.
մեր կուսակցության առաջնորդ ընկ. ՍՏԱ
ԼԻՆԻ դեկավար դերի ուսումնական իրության
կենտրոն (Ժամանակառություններ) :

Այդ ինստիտուտի աշխատանքի հաջո-
ղությունը կախված կլինի նրանից, թե
մեզ վորքան կհաջողվի նրա չուրջը համա-
խմբել և՛ հին, և՛ յերխատարդ լավ մարք-
սիստ-պատմագետներին, և այն ակտով մաս
նակցությունից, վոր Բաղվի կազմակեր-
պությունը կրնենա ինստիտուտի աշխա-
տանքներում։ Զե՞ վոր հենց Բագուն եր,
վորին ընկ. ՍՏԱԼԻՆՆ իր յերկու տարվա
աշխատանիքով Անդրկովկասի բոլշևիզմի
միջնաբերդը դարձեց։ Դա Բագվի կազմա
կերպության դերն ե վորշում ընկ. ՍՏԱ
ԼԻՆԻ մասին յեղած պատմական նյութերը
մշակելու գործում։

Մ Ա Մ Ո Ւ Լ Ը

Անցյալ յերեք տարին բնորոշվում է
մեր մամուկի և առաջին եերքին թերթերի
բանական ու վորակական մեծ անոլ։

Յեթե 1930 թվին Անդրկովկասում
մենք ունեցել ենք ընդամենը 49 թերթեր
765.000 որինակ տիրաժով, ապա ներկա

Յոմենսում ունինք 355 թերթ՝ 1.268.000
որինակ տիրաժով։

Համկոմկուսի (բ) Կենտակոմի այն գլ-
րեկտիվը, վոր ամեն մի ուայոն իր թերթն
ունենա, հիմնականում մենք կատարել
ենք։ Բացի զբանից վերջին մի քանի ամիս
ներում մենք թերթեր ենք ստեղծել գրե-
թե բոլոր ՄՏԿ ու Խորհրդանտեսությունների
քաղաքացիններում (Քաղաքացինների 67
թերթ)։

Վերջին տարիներս ստեղծված թերթե-
րի ճնշող մեծամասնությունն ազգային լի-
գուներով և հրատարակվում։

Յեթե 1930 թվին Անդրֆեդերացիայում
մենք ունենինք ընդամենը թուրքերեն լեզ-
վով հրատարակվող 9 թերթ, ապա այժմ
ունինք 111։ 1930 թվին հայերեն հրատա-
րակվող 11 թերթի փոխարեն՝ մենք ունինք
55։ Վրացերեն լեզվով 119 թերթ և հրատա-
րակվում 1930 թվի 13-ի փոխարեն։ Այդ
տարիների ընթացքում մենք մի շաբթ թեր-
թեր ենք ստեղծել այնպիսի լեզուներով,
վորոնցով առաջ յերեք թերթ չեր հրա-
տարակվում, — մինդրելերեն, քրդերեն,
ավարերեն, թաթերեն, թալիչերեն և ասո-
րական լեզուներով։

Այս յերեք տարվա մեջ զգալի հաջողու-
թյուն ենք ունեցել նաև զրգերի հրատարա-
կության ասպարիդում։ 1930 թվին Անդր-

կովկասում հրատարկված գրքերի տիրաժը
յեղել է 13.557.000 որինակ, իսկ 1933 թվին
այդ հասել է 20.435.000 որինակի:

ՍԱՍՍԱՅԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԾԽԱՏԴՐԵ

Անդրկովկասը վոչ միայն մինչև հեղափոխությունը, այլև մենշևիկա-դաշնակցան ու մուսավաթական տիրապետության շրջանում գրեթե համատարած անդրադիտության յերկիր եր: Վրաստանում անդրադեմատների քանակությունը հասնում եր 80 տոկոսի, իսկ Ադրբեյջանում մինչև 90,7 տոկոսի:

Գրադիտությունը 1933 թվին Ադրբեյջանում հասել է 78 տոկոսի, Վրաստանում — 87 տոկոսի, իսկ Հայաստանում — 95 տոկոսի: Սակայն անդրադիտության վերացման տեմպերն ու այդ աշխատանքի վրակը պետք է անբավարար համարել:

Մենք չենք կատարել Համկոմկուսի (ր) կենտկոմի 1932 թ. ապրիլի 23-ի վորոշումը բոլոր անհրաժեշտ պարմաններ և տոեղծել դրականության ու արվեստի ասպարիզում աշխատող մեր ազգային կադրերի ստեղծագործական ամաման համար:

Մանը ազգային փոքրամասնությունների ու կանանց, մանավանդ բրդուհիների շըրջամում:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐՎԵՍՏԸ

Անդրֆեղերացիայի հանրապետություններում ազգային-կուլտուրական շինարարության աճման հիմնական ցուցանիշներից մեկն է վերջին տարիներս ձեռվ ազգային և բովանդակությամբ սոցիալիստական գեղարվեստական գրականության ու արվեստի զարգացումը:

Համկոմկուսի (ր) կենտկոմի 1932 թ. ապրիլի 23-ի վորոշումը բոլոր անհրաժեշտ պարմաններ և տոեղծել դրականության ու արվեստի ասպարիզում աշխատող մեր ազգային կադրերի ստեղծագործական ամաման համար:

Վերջին ժամանակաշրջանում զգալի կերպով սրողացել է յերկրի գրական կազմակերպությունների վիճակը: Սակայն մինչև այժմ կան խմբակայնության տարրեր Վրաստանի, Հայաստանի և Ադրբեյջանի գրական կազմակերպություններում: Մեր խորհրդային գրողների գեղարվեստական մի շարք արտադրությունները

մեջ կան նացիոնալիզմի արտահայտության փաստեր :

Այդ բոլորը վկայում են, վոր անհրաժեշտ է ուժեղացնել կուսակցական գումառությունն աշխատանքի այդ տեղամասում

Մեր յերկրում աղջային կուլտուրայի աճման ցածրուն ցուցանիշներից մեկն ե վերջին ժամանակներս մեր հանրապետություններում առաջատար թատրոնների ամրապնդումը :

Այսում են և արվեստի մյուս ձյուղեր՝ յերաժշտությունը, կինոն, կերպարվեստները :

Այսպիսով վերջին տարիներս ազգային դպրոցների, ԲՈՒՀ-երի, մամուլի, գրականության, արվեստի գարգացումը ցույց է տալիս, վոր մեզ մոտ լուրջ նվաճումներ կան ազգային կուլտուրական շինարարության նակատում։ Սակայն աշխատանքի այդ ասպարիզում մենք դեռ ենք ենք մնում սոցիալիստական շինարարության պրակտիկայից, այն հաջողություններից և նվաճումներից, վոր մենք ունինք արդյունարերության ու գյուղատնտեսության ասպարիզում։

Աղջային՝ կուլտուրական շինարարության ասպարիզում քաղաքական կարեռագույնին խնդիրն է հանդիսանում նացիոնալիզմի ու նացիոնալ - ուկրոնիզմի դեմ մը

զած պայքարի ուժեղացումը։ Լենինյան աղքային քաղաքականությունն Անդրկովկաստում կիրառելու հետևանքով մենք՝ բնկ ՍՏԱԼԻՆԻ դեկալարարյամբ՝ ջախչախեցինք բուրժուական նացիոնալիզմը և նացիոնալ - ուկրոնիզմը։ Մեծապետական շուկանիզմը շարունակում է մեալ մեր պայմաններում գլխավոր վտանգ։

Սակայն մեր յերկրում դասակարգային պայքարի սրման կապակցությամբ՝ մորոշ չափով աշխատացել են նացիոնալիստական տարրերն ու նացիոնալիստական տրամադրությունները։ Մեր ինտելիցենցիայի առանձին խմբակներում մենք փորձեր ենք տեսնում ոգտադրելու՝ ձեռվագ գային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի լողունքը՝ բուրժուական նացիոնալիզմի ոգտին։ Այդ մասին խոսվել է հանրապետական համագումարներում։

Մեր հետագա աշխատանքում պետք է մենք հաշվի առնենք Ուկրայնայի դասերը, վորտեղ նացիստական տարրերն Ուկրայնայի կուսակցական կազմակերպությունների զգացառության թուլացման հետեւանքով կարողացել են կուլտուրական ու տնտեսական շինարարության մի շարք տեղամասերում վնասարարական աշխա-

տանք ծավալել՝ խցկվելով կուսակցության
շարքերը:

Այդ պատճառով ել անհրաժեշտ է տրվ
յալ ետապում ավելի և ուժեղ կերպով
պայքար ծավալել տեղական նացիոնալիզմի
ամեն տեսակների դեմ, աշխատանք ծավա
լել մասսաների ինտերնացիոնալ դատիա-
րակության համար:

Մեր ինտելիգենցիայի և՝ վրացականի,
և՝ թուրքականի և՝ Հայկականի ճնշող մա-
սրն արդեն լծվել է սոցիալիստական շինա
րարությանը: Միայն աննշան խմբակն եր
փորձում ելի վնասել ու ապականել: Նա
ջախջախված է: Անդրկովկասյան բոլցեկե-
ները նացիոնալիզմի ու շովինիզմի դեմ
պայքարելու հաստատուն դպրոցն են անցել
և մի անգամ չեն, վոր ապացուցել են, թե
իրենք վորքա՛ն բարձր են պահում Լենի-
նի-Ստալինի դրոշն ազգային հարցում: Նր
անք այդ հարցում իրենց անհաշտվողա-
կանությունն ու սկզբունքայնությունն այ
սուհետե ել կապացուցեն: Մեր կուլտուրա-
կան շինարարության բոլոր տեղամասերում
անհրաժեշտ ե ամրացնել ինտերնացիոնալ
կապը՝ թե Անդրկովկասի հանրապետու-
թյունների աշխատավորների միջև և թե
մեր հանրապետության ու Խորհրդային Մի

ության մյուս հանրապետությունների և
ամենից առաջ Խորհ. Ռուսաստանի հետ:
Պետք է ուսումնասիրել ուսւերեն լե-
զուն, պետք է մեր գպրոցում բարելավել
նրա դասավանդումը: Վրաստանի նկատ-
մամբ Վրաստանի կոմկուսի (բ) կենտկոմն
արդեն համապատասխան վորոշում և կա-
յացրել:

Նույնն ել պետք է անել նաև Անդրֆե-
դերացիայի մյուս հանրապետություննե-
րում՝ Ադրբեջանում և Հայաստանում:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

Նախքան կուսակցական շինարարության հարցի լուսաբանմանն անցնելը՝ թույլ տվեց ինձ թեկուզ մի քանի խոսքով կանգ առնել մեր փառապահն Կովկասյան Կարմրադրոշ բանակի հաջողությունների ու նվաճումների վրա։

Մարտական պատրաստության ու բազմական ուսման ասպարհութ մեր Կովկասյան բանակի հաջողություններն անկանած մեծ են։

Սակայն, մեր բանակը չի կարող և չը պետք է հանդստանա ճեռք բերած հաջողություններով։ Միջազգային բարդացած դրությունն ստիպողաբար թելադրում և ռազմական տեխնիկային ավելի տիրապետելու անհրաժեշտությունը և 1934 թվին սազմա - քաղաքական ուսուցման բոլոր ցուցանիշների «գերազանց» գնահատականով անպայման կատարումը։

Անդրկովկասի կուսակցական ու խորհրդային կազմակերպությունները պետք է

ամենամեծ չափով ոգնեն այդ կարևորագույն աշխատանիքին՝ ունեն կերպ աշակցելով մեր փառապահն Կովկասյան բանակի ամող պահանջների բավարարմանը։

Վերջերս վերջացած բանակային կուսակցական կոնֆերանսը, աշխատանքի բոլոր թերությունների մասին այնտեղ ծավալված բոլշևիկյան ինքնաքննադատությունը՝ հաստատուն յերաշխիք են մեր բանակի առաջ կանգնած խնդիրների հաջող կատարմանը։

ԿՈՒՍՁԻՆԱՐՄՐՈՒԹՅՈՒՆ

Համկոմկուսի (բ) կենտկոմի 1931 թվի հոկտեմբերի 31-ի վորոշման իրացման համար մղկող պայքարում՝ Յերկրային կոմիտեն և հանրապետությունների կենտկոմները հասել են այն բանին, վոր վերացվել ե անդործունյա գրությունը, բարձրացել ե կուսակցական կարգապահությունը կազմակերպության մեջ և մարդիկ դասավորված են գործունակության սկզբունքով։

Ամրապնդվել ե կուսակցական դեկափառությունը մեր աշխատանքի բոլոր տեղամտութում։ Զգալիորեն բարձրացել ե Անդրկովկասյան կուսակցական կազմակերպությունների ազդեցությունը բանվորների և կոլտնտեսականների լայն մասսաների վրա։ Կուսակցության հեցինակությունն անել ե։

Այս համգամանեն տուաջին հերթին ազդել ե կուսակցության անման վրա։

Կուսակցության մեջ են ընդունված 90,169 հոդի, վորից բանվորներ՝ 52,162 (56,7 տոկոս), կոլտնտեսականներ՝ 22,583 (24,4 տոկոս), կանայք 11,099 (12,3 տոկոս)։

Յոթերորդ համագումարին Անդրկովկասյան կուսակցմակերպությունն իր չարքերում հաշվում է 144,591 կոմունիտ՝ այդ թվում թեկնածուներ 43,201 հոդի կրանցից բանվորներ 59,8 տոկոս, կոլտնտեսականներ 24 տոկոս։

Քանակական աճման հետ միասին ըգագալիորեն բարձրացել ե Անդրկովկասյան կուսակցմակերպությունների գաղափարը՝ բաղադասական մակարդակը։

Յոթերորդ համագումարին կուսուսուցման ցանցով ընդգրկված ե կազմակերպության կազմի 78,7 տոկոսը, այսինքն 89,401 հոդի, այն ժամանակ, յերբ 1930-31 թվերին քաղուսուցմամբ ընդգրկված երկազմակերպության 29 տոկոսը։

Այս տարի կուսուսավորության ցանցով ընդգրկված ե Անդրկովկասյան կուսակցմակերպության թեկնածուական կազմի 80,9 տոկոսը։

Քաղբաժինների ոգնությամբ հաջողվեց մի շարք գյուղական ռայոններում բարար կերպով դնել մարզսովենինյան գաստիարակության աշխատանքը (Ողուրդետի, Գյուրջիանիի, Լագոդեխի, Լենինականի և այլ ռայոններ)։

Այնուամենայնիվ մենք դեռ մի շարք վայրերում լիովին չենք վերացրել կուսակ-

ցական աշխատանքի այս կարեորագույն տեղամասի թերագնահատումը:

Մի շարք ռայոններում կուսակցական ուսուցումը ամբողջապես տապալվել եր (Ատեփանավան, Կարագոնլու, Ռնի, Բաղդադի):

1933 թիվը հանդիսացավ Անդրկովկաս յան ռայոնների կադրերի ամրապնդման վեռական ստուգատեսի տարի, վորպես առցիալիստական շինարարության հանգույցա յին կետեր:

Համկոմկուսի (թ) Անդրյերկոմի և հանրապետությունների կենտկոմների կողմից անց է կացվել գյուղական ռայոնների ղեկավար կադրերի ստուգատես, վորը ղուգակցվել է ռայոնները ստուգված աշխատողներով ամրապնդելու հետ: Ռայոնների ամրապնդման աշխատանքները տարվել են դիմումացարած ձևով: Հատկապես կադրերի ընտրություն է կատարվել սահմանաժեռած, բամբակագործական և թեյաբուժական ռայոնների համար, վորոնք զգալիորեն ամրապնդվել են:

Աշխատակիցների ավելի թույլ կազմ ֆենք ունինք անսանապահական ռայոններում: Այս տեղամասի վրա անհրաժեշտ է դեռ համառորեն աշխատել:

1933 թվին գյուղն ամուր ջոկատ ստացավ ի դեմու ՄՏԿ-ների և խորհութեառու-

թյունների քաղբաժինների աշխատողների: Քաղբաժիններում աշխատելու յեն ուղարկված անձնապես ստուգված 484 աշխատողներ:

Մեծ ուշադրություն և դարձված գյուղական կուսակցական ստորին կադրերի ամրապնդմանը: Բայց այս աշխատանքը խոչոր չափով ընթացել է ռայոնական կենտրոններից և քաղաքներից աշխատողներին գյուղ ուղարկելու ճանապարհով:

Գյուղում կուսակցական աշխատանքի ստուգարիզում մենք քիչ նվաճումներ չունենք: Խոչոր աշխատանք և տարված կուտնահասական արտադրական բջիջներ ստեղծելու և կոմունիստներին անմիջապես կուտնահասության արտադրության մեջ աշխատանքի ուղարկելու համար:

1932 թվին կուտնահասություններում յեղել է ընդամենը 2,166 կուսողակ, իսկ այժմ՝ նրանց թիվը հավասար է 5,237-ի:

Գյուղական կոմունիստների ավանդարդակիցն զերս կուտնահասական արտադրության մեջ զգալիորեն բարձրացել է:

Հետագայում անհրաժեշտ է շարումնակել քաղաքից գյուղ մշտական աշխատանքի ուղարկելը, ուշադրությունը կենտրոնացնել այն նոր ակտիվի անեցման և առաջ քաշման վրա, վորը վերջին տարիների ներացքում անել է գյուղում:

